ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.2

Նիստը գումարվել է 14/04/2023թ.-ին: Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 7-ը, 2-ը բացակայում էին հարգելի պատճառով:

Նիստին ներկա էին դպրոցի տնօրենի պաշտոնակատար Ս.Խաչատրյանը, գլխ.հաշվապահը Գ.Մարտիրոսյանը:

Օրակարգում.

1. Աղբաղարձ նախորդ նիստին: 14.04.2023թ. նիստի օրակարգային հարցերի հաստատում:

/ Զեկ. Մ.Մարգսյան/

2. Դպրոցի բյուջեի հաշվետու ժամանակաշրջանի / I եռամսյակի/ վերաբերյալ հաշվետվության ներկայացում և քննարկում:

/ Զեկ. Գ.Մարտիրոսյան /

3. Դպրոցի զարգացման ծրագրի կատարման ընթացքի մասին: 2-րդ կիսամյակի ուսումնադաստիարակչական միջոցառումների կազմակերպման ծրագրերի հաղորդում /9-րդ դասարաններում <<Վերջին զանգ>>/:

/Զեկ. Ս.Խաչատրյան /

4. Դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին: Կարգի հաստատում:

/Զեկ. Ս.Խաչատրյան/

1. Հաստատեցին օրակարգային հարցերը:
2. Լսեցին գլխավոր հաշվապահի զեկույցը:
    1. Դպրոցի եկամուտների և ծախսերի հաստատված նախահաշվի և փաստացի կատարողականի համեմատական ցուցանիշների վերաբերյալ: /01.01.2023-31.03.2023/
    2. Դպրոցի դրամական միջոցների հոսքերի հաստատված նախահաշվի և փաստացի դրամական միջոցների հոսքերի համեմատական ցուցանիշների վերաբերյալ:
    3. Դպրոցի դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ / 01.01.2023-31.03.2023 /:

Որոշեցին.

Առաջնորդվելով <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված դպրոցի բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունը՝ հավանություն տալ ներկայացված 2023թ.-ի I եռամսյակի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությանը: /Կցվում են տեղեկանքները/

3. *Լսեցին զեկույցը*: Ս.Խաչատրյանը ներկայացրեց ուսումնադաստիարակչական աշխատանքների մասով նորամուծությամբ /նոր ՀՊՉ –ի ներդրում/ վերապատրաստված ուսուցիչների հետազոտական աշխատանքների ներկայացումը, որի ներդրումով 12 ուսուցիչների վերապատրաստումից հետո ներկայացված հետազոտական աշխատանքները նպաստելու են ուսումնական գործընթացի առավել բարելավմանը:

Ս.Խաչատրյանը նշեց նաև դպրոցի ծրագրված միջոցառումների մասնակցության մասին: Խորհրդի անդամներին հրավիրեց և տեղեկացրեց 9-րդ դասարանների ավարտական միջոցառման՝ <<Վերջին զանգ>> միջոցառման օրվա և ժամի մասին: /26.05.2023թ., ժ.11:00, 12:00/

Որոշեցին. Սիրով մասնակցել դպրոցում տեղի ունեցող ցանկացած միջոցառման /Էլմիրա, Լիանա/:

4. Լսեցին Ս.Խաչատրյանի զեկույցը ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ժ.Շանելյանի երկամսյա իր հաշվին բացակայելու և հայտարարած աշխատանքից ազատվելու մասին:

Որոշեցին. Հաստատել ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար կարգը:

Խորհրդի նախագահ՝ Ս.Սարգսյան

Քարտուղար՝ Եվ.Բարսեղյան